ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄԱԸՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴԴՐՈՑԻ ՄԱՐԶԱՂԱՎԼԻՃԻ ԵՒՆՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի -ի N 3/3.8-2/-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի -ի N 02/-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի փետրվարի -ի N ՖՔ/ԱՆՄ-4/-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 14,930 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Հազարաչեն» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 08400329) 2014 թվականի փետրվարի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 14,930 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի, Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՎԱՍՏԱՏՎԱԾ Է
կողմից
Փետրվարի 2014թ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի
Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգման աշխատանքների իրականացում» Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ի

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է նպաստել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցում ուսուցանող շուրջ 95 աշակերտների հոգեբանական և ֆիզիկական խնդիրների վերականգնմանը՝ դպրոցի մարզադահլիճի վերանորոգման միջոցով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱՄՆ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3. Բարեգործ	Ամերիկայի ՀՕՑ-ի կողմից ֆոնդի գրասենյակ
4. Ծրագիրը կատարողը	Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Մ. Կայրո ՔՔ, Գեղարքունիքի մարզ. ք. Գավառ, Միջայելյան 33
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ինտերնացու փող. 22, ԳՎՀՐ 02517115
6. Ծրագրի բյուջեն	Բնագավառը կոթակալան
7. Բարեգործություն ստացողը	Գավառի ընդհանուր արժեքը կազմում է 14 930.00 ԱՄՆ դոլար
8. Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը	Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի ղուկ 23.02.2014 – 30.06.2014
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճը, որը հնարավորություն կտա աշակերտներին ուսումնական պրոցեսին զուգընթաց վերականգնել ֆիզիկական և ընտանի կարողությունները: Վերանորոգումն ինտո մարզադահլիճը համարված կլինի անհրաժեշտ սարքավորումներով ուղղված աշակերտների ֆիզիկական և ընտանի խնդիրների լուծմանը:
10. Զեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համարուտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 14 930 ԱՄՆ դոլար և բաղկացած է միայն շինարարական աշխատանքների արժեքից: Իրականացվելիք շինարարական աշխատանքների մանրամասն ծավալները և արժեքները տրված են պայմանագրին կնքվածում:

3/10

3/10



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

3/10

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

3.03.14 № 3/3.8-2/3071-14

Ձեր № _____

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան


Ի պատասխան Ձեր 25.02.14թ. N 15/15.1/2595-14 գրության՝ կապված «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանցուղազյան

024/5686-14

Կառարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227



2

<p>Գերաբերումիցի մարզ, Վարդաշակ Փոշոտյան 1, 3433 08400329) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, 3433 02517115) միջև:</p>	<p>Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: ՀՀ Գերաբերումիցի մարզպետարան, ՀՀ կառավարության առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող համձնաժողով: Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի կողմից գրանցված կողմից: Եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող համձնաժողովի կողմից:</p>
<p>11 Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր</p>	<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>



3/10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078 Երևան, Հայաստան 41^ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

02/1227-14
27.02.14

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 25-ի
15/15.1/2595-14 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի» Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգում» ծրագրի դրոյթներն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել նախատեսվող միջոցառումների ժամկետները՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

035/5357-14



3/10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

« 3 » 03 2014 թ.

N 316/ԱՊՈՎ-4/1
1234-14

Ձեռ 2014-02-25, 15/15.1/2595-14

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Տ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/5683-14

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
գարգացման ծրագրերի վարչություն 542-736



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՒ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

3/10

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

ԿՊ/3-Վ/2256-14
28.02.14

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 25.02.2014թ. թիվ 15/15.1/2595-14 գրությանը կից ներկայացված «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

 Վ. Միրոնյան

Ընթացակարգերի բաժին, հեռ. 060 544645

044/5449-14

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Հիմնավորում	Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը
Հիմնավորում ՀՀ արդարադատության նախարարություն – 27.02.14, N 02/1227-14	1. Ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել նախատեսվող միջոցառումների ժամկետները 1. Առանձին միջոցառումներ նախատեսված չեն, իսկ ծրագրի իրականացման ժամկետը նշված է 8-րդ կետում

3/10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

3/11

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— մարտի 2014 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մարտի -ի N 02/-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի մարտի -ի N 03/07-1/-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի -ի N ՎՄ/3-4/345-13 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) իրականացվող՝ 72,463,914 դրամ ընդհանուր արժողությամբ «2014-2015 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցվածքի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2003 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N 282767 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մարտի 1-ից մինչև 2015 թվականի մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 270,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի ապրիլի 12-ին կնքված՝ N 010253967 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մարտի 1-ից մինչև 2015 թվականի մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 495,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 21-ին կնքված՝ N 008241 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մարտի 1-ից մինչև 2015 թվականի մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 765,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Արմինկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01501597) 2009 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ N 20681 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի մարտի 1-ից մինչև 2015 թվականի մայիսի 1-ը ընկած ժամանակահատվածում համացանցի կապի ծառայությունների մատուցում՝ 315,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:


4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:


2014-2015 թթ. ընթացքում ՀՀ գիտական ենթակառուցի պահպանման և ընդունակ գործառնան աջակցություն
 Օ Ր Ա Գ Ի Ը

1.	<p>Օրագրի նպատակը</p> <p>-Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը, -միջազգային գիտական համակարգի հետ ՀՀ գիտական հանրության ինտեգրման գործընթացին, -մտավոր ներուժի արտանուսխի կախման գործընթացին, -ՀՀ գիտական համակարգը երիտասարդ կայրերով համալրման գործընթացին, -միջազգային չափորոշիչներին համապատասխանող քարտապացիական բնույթի գիտական հետազոտությունների իրականացմանը: Նախատեսվում է ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել մաքսային և հարկային արտոնություններից:</p>
2.	<p>Օրագրի բարեգործական շրակման նպատակը</p>
3.	<p>Բարեգործը</p> <p>ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակույմների հիմնադրամը (FZUZ), 1530 Wilson Blvd. Arlington, VA 22209, USA. Tel.:+1(703)-526-9720 և Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, Հայաստանի Հանրապետություն, Երևան 0001, Տեղյան 74, Աբովյան 50/5: Հեռախոս՝ (37410) 567 922, (37410) 545 802:</p> <p>Օրագիրը իրականացնում է Գիտության և արագատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՍԱՀ), քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ 00040233</p>



5.	<p>Օրագրի իրականացման վայրը և բնագավառը</p>	<p>Օրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ գիտական և կրթական համակարգում գործող ոչ առևտրային կազմակերպություններում և առնչվում են գիտության և կրթության բնագավառին:</p> <p>Օրագրի բյուջեն կազմում է 72463914 (յոթանասուներեքու միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր տասնչորս) դրամ:</p> <p>Ֆինանսավորման աղբյուր է հանդիսանում ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակույմների հիմնադրամը (FZUZ), 1530 Wilson Blvd. Arlington, VA 22209, USA. Tel.:+1(703)-526-9720, և Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, Հայաստանի հանրապետություն, Երևան 0001, Տեղյան 74, Աբովյան 50/5 ; Հեռախոս՝ (37410) 567 922, (37410) 545 802: Օրագրի ընդհանուր ֆինանսական աջակցության ծավալները բաշխվելու են ըստ հետևյալ ուղղությունների՝</p>
6.	<p>Օրագրի բյուջեն</p>	<p>- երիտասարդ գիտնականների աջակցություն YSSP-13 – 19121787 (տասնինը միլիոն հարյուր քսանմեկ հազար յոթ հարյուր ութսուներեք) դրամ, որից</p> <p>- անհատական ֆինանսական աջակցություն – 7924050 (յոթ միլիոն ինը հարյուր քսանչորս հազար հիսուն) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը, - գիտական գործադուրմներ – 5944383 (հինգ միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր ութսուներեք) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը., - սարքերի, նյութերի և ծառայությունների ձեռքբերում – 5253354 (հինգ միլիոն երկու հարյուր եիսուներեք հազար երեք հարյուր հիսունչորս) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը.:</p> <p>- երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն – 2012 (ECSP-2012) - 44072127 (քառասունչորս միլիոն յոթանասուներեքու հազար հարյուր ուսուներեք) դրամ, - անհատական ֆինանսական աջակցություն – 14996250 (տասնչորս միլիոն որից</p>



	<p>ինը հարյուր ինսունվեց հազար երկու հարյուր հիսուն) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը,</p> <p>- գիտական գործուղումներ – 18578259 (տասանութ միլիոն հինգ հարյուր յոթանասուութ հազար երկու հարյուր հիսունհինգ) դրամ 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը,</p> <p>- սարքերի, կուլթերի և ծառայությունների ձեռքբերում - 10497618 (տաս միլիոն չորս հարյուր ինսունյոթ հազար վեց հարյուր տասնութ) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը,</p> <p>- ԳՍՏԱՀ-ի կազմակերպչական ծախսեր – 9270000 (ինը միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) դրամ,</p> <p>- աշխատավարձ – 6750000 (վեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը</p> <p>- գրասենյակի հիմնական հետախոս – 495000 (չորս հարյուր ինսունհինգ հազար) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը</p> <p>- գրասենյակի բջջային հետախոս – 2700000 (երկու հարյուր յոթանասուն հազար) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը</p> <p>- գրասենյակային ինտերնետային կապ – 315000 (երեք հարյուր տասնհինգ հազար) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը</p> <p>- գրասենյակի էլեկտրաէներգիայի ծախսեր – 765000 (յոթ հարյուր վաթսուհինգ հազար) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը</p> <p>- սուսլիտ – 675000 (վեց հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2014թ. մարտի 31-ը:</p>
<p>7. Բարեգործության ստացողը</p> 	<p>Նշված ծրագրով բարեգործություն ստացողներ են հանդիսանում</p> <p>ՀՀ գիտական և կրթական համակարգում գործող ոչ առևտրային բոլոր կազմակերպությունները, որոնց կողմից ներկայացված առաջարկությունները գիտական անկախ փորձաքննության արդյունքներով ֆինանսական աջակցության կերպով ստացվել են ծրագրին իրականացնողի կողմից:</p>
<p>8. Ծրագրի իրականացման տևողությունը</p>	<p>Ներկայացվող ծրագրի տևողությունը կազմում է 14 ամիս, սկսած 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը:</p>

3/11

<p>9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</p>	<p>Նշված ծրագրի իրականացման նպատակով նախատեսվող միջոցառումները հանդիսանում են.</p> <p>դրամաշնորհի ֆինանսական և կուլթական միջոցների ստացումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին 63193914 (վաթսուներեք միլիոն հարյուր ինսունեքեք հազար ինը հարյուր տասնյոթ) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը, այդ թվում սարքերի, կուլթերի և այլ անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերումն ու դրանց անհատույց տրամադրումը շնորհառուներին 15750972 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար ինը հարյուր յոթանասուներկու) դրամ, 2014թ. մարտի 1-ից մինչև 2015թ. մայիսի 1-ը:</p>
<p>10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագրեր, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել (ինչպես Հանրապետության ներսում, այնպես էլ Հանրապետությունից դուրս) հասնակարգչային տեխնիկա և օժանդակ կուլթեր, լաբորատոր սարքավորում և կառույթ, գրենական պիտույքներ, ինչպես նաև տարբեր ծառայություններ՝ ընդամենը 15750972 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար ինը հարյուր յոթանասուներկու)դրամի:</p> <p>Հաշվի առնելով այն, որ ծրագրերը դեռ ակտիվացված չեն, գնումների մտավոր բաժանումը հետևյալն է</p> <p>8000000 (ութ միլիոն) դրամի՝ Հանրապետությունից դուրս կատարվող գնումներն են (այդ գումարի չափով ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ մաքսային արտոնություններ), և 7750972 (յոթ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար ինը հարյուր յոթանասուներկու) դրամի՝ Հանրապետության ներսում կատարվող գնումներն են (այդ գումարի չափով ակնկալվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ հարկային արտոնություններ):</p>
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը.</p>	<p>Նշված թվերի փոփոխման դեպքում մենք դիմելու ենք ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացված ծրագրում համապատասխան փոփոխություններ կատարելու ինտրանսով:</p> <p>Նշված ծրագրից, որպես կազմակերպչական ծախսեր, «Բարեգործի» կողմից ԳՍՏԱՀ-ին տրամադրվելու է գումարի 12,8%, ինչը կազմում է 9270000 (ինը միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) դրամ:</p>

3/11



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

3/11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ**



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
DEPUTY MINISTER

3/11

№ 02/1278-14
03.03.2014թ.

0078 Երևան, Հայաբյան 41", հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին**

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Tel.: 58 03 02, ֆաքս/ֆաքս/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

№ 03/02-1/1997-14 " 03 032014

*«Հ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ա.Տեր-Սիմոնյանին»*

Ի կառարումն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 26-ի
15/15.6/2714-14 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային
հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում
Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցվածքի պահպանման և հետագա
զարգացման աջակցություն» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի փետրվարի 26-ի №15/15.6/2714-14 գրության՝
հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների
ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2014-2015 թվականների ընթացքում
Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցվածքի պահպանման և հետագա
զարգացման աջակցություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ
կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՄԿՐՏՅԱՆ

035/5561-14
03.03.2014թ.

031/5685-14
03.03.2014թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՒ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 3/11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

3/12

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մարտի 2014 թվականի N Մ - -Ա
քաղ. երևան քաղ. երևան

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

Վ: ՎՊ/3-4/2246-14
28.02.2014թ.

«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՄՊԻՏԱԿԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.02.2014թ. թիվ 15/15.6/2714-14 գրությանը կից ներկայացված
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների
ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2014-2015 թվականների ընթացքում
Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցվածքի պահպանման և հետազա-
վարագման աջակցություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
2014 թվականի մարտի -ի N 3/3.8-1/14, Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության 2014 թվականի մարտի -ի N 02/14, Հայաստանի Հանրապետության
կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի -ի N ՎՄ/3-
4/345-13 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի մարտի -ի N-14
եզրակացությունները, որոշում է:

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ.
Երևան, Աշտարակի խճուղի, «Հուլիսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝
1,491,628 դրամ ընդհանուր արժեքով «Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոցի մասնակի վերա-
նորոգում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-
տակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմա-
նագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2014 թվականի փետրվարի 6-ին
կնքված՝ N 060214 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ննջասենյակի
և խաղասենյակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 1,491,628 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա
ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություն-
ներ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Սպիտակի
քաղաքապետին:

Հարգանքով՝

 Վ. Միրոնյան

044/5416-14
28.02.2014թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

3/12

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

05.03.2014թ. № 3/3.8-2/3262-14

Ձեր № _____

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.02.14թ. N 15/15.6/2717-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանցուղայան

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227

034/5955-14
05.03.2014թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

3/12

0078 Երևան, Հայաստան 41^ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

№ 02/1277-14
03.03.2014թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 26-ի 15/15.6/2717-14 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

035/5593-14
03.03.2014թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՒ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 3/12

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303


№ հ.Վ.Մ.Ս. 13-4/2311-14
03.03.2014 թ.

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.02.2014թ. թիվ 15/15.6/2717-14 գրությանը կից ներկայացված
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագրի
մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

 Վ. Միրոնյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

044/5594-14
03.03.2014 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ 3/12

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ 101/104.3.2/923-14

« 03 » 03 2014 թ.

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՊՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Ձեր 26.02.2014 թ. թիվ 15/15.6/2717-14 գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Կարևորում եմ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝
1,491,628 դրամ ընդհանուր արժեքով «Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոցի մասնակի վերա-
նորոգում» ծրագիրը և չեմ առարկում այն որակել որպես բարեգործական:

«ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ»

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ



Կատ. Ս.Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

114/5596-14
03.03.2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

3/13

Ո Ր Շ ՈՒ Մ
----- 2014 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

«ՀՈՎԱՐՂ ԿԱՐԱԳՅՈՋԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ՝ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 3/3.8-2/2272-14, Հայաստանի Հան-
րապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 19-ի
N 02/996-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014
թվականի փետրվարի 13-ի N ԴԴ/22/1250-14, Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի
N ՎՄ/3-4/1663-14, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի
փետրվարի 17-ի N 01/705-14, Սյունիքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 17-ի
N 01/769-14 ու Լոռու մարզպետի 2014 թվականի փետրվարի 17-ի N 101/104.3.2/673-14
եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական
հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝
01533153) կողմից իրականացվող՝ 469,780,800 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների
անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-
տակով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակեր-
պության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «ԷՍԶԵԹ Ֆարմա»
ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433863) 2014 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 02/2014 պայմա-
նագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ատամնաբուժական պարագաների
մատակարարում՝ 5,699,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակեր-
պությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատ-

ճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստա-
նի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատ-
վող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված
ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը
մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի
ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման
մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապե-
տության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առըն-
թեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապե-
տության Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետներին, Գյումրու, Վանաձորի ու Գորիսի քաղա-
քապետերին:



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագոյցյան» ԲԲԿԿ
 ...Ալեխիք Հարությունյանցի կողմից

«11» փետրվարի... 2014.թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՈՐԾԱՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԾՎՈՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱԿՆԱԿԱՆ ԲՈՒՅՈՒՆ-Ց 2014թ. ԸՆԹԱՍՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՆԱՆԵՐԻ ԱՆՎՅՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ՕՐԿՈՒՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ավաիտվումը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից
3	Բարեգործը	Հովարդ Կարագոյցյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք)
4	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարագոյցյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն «Հովարդ Կարագոյցյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով հիմնված 6 մասնաճյուղ մասկայան ատամնաբուժական դարձնամատները և 6 ակնաբուժական կաբինետները, որտեղ պայմանագրային հիմունքներով աշխատում են կազմակերպության կողմից վարձատրվող, տվյալ քաղաքներում բնակվող 31 ատամնաբույժներ, 6 ակնաբույժներ, 53 միջին բուժաշխատողներ (բուժքույրեր), 10 կրտսեր բուժաշխատողներ, 8 վարչական և 30 օժանդակ աշխատակիցներ: Դարձնամատներից 3-ը (Երևանի-2 և Վանաձորի) աշխատում են երկօրյակ, իսկ 3 -ը (Գյումրիի, Գորիսի և Ստեփանակերտի) մեկ օրյակ: Դարձնամատներում գործում են 21 ընդհանուր ատամնաբուժական, 6 ակնաբուժական, 6 ռենտգեն, 6 պատահանման կաբինետներ և 6 գրանցման բաժիններ՝ բոլորն էլ հագեցած ժամանակակից սարքավորումներով, գործիքներով և բուժամյութերով:

3/13

5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Հովարդ Կարագոյցյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Լորդի կղզիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 7477-01533153:																										
6	Ծրագրի բյուջեն	ՀՀ մայրաքաղաք Երևանում, Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Լոռու մարզի Վանաձոր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում առողջապահության բնագավառում Ծրագիրը ամբողջությամբ ֆինանսավորվում է անձրիկյան «Հովարդ Կարագոյցյան» Հիշատակի ընկերակցության կողմից: 2014թ. համար նախատեսված են 469,780,800 դրամի ծախսեր՝ ըստ եռամսյակների բաշխված հավասարաչափ՝ 25-ական տոկոս (117,445,200 -ական դրամ), իսկ ըստ ուղղությունների բաշխված է հետևյալ ձևով. <table border="1"> <tr> <td>ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական կարագամեր, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ուսանյակներ.</td> <td>Դրամ</td> </tr> <tr> <td>բ) բուժամենակազմի աշխատավարձեր, հարկեր.</td> <td>93 146 400</td> </tr> <tr> <td>գ) վարչական աշխատակիցների աշխատակազմեր, հարկեր.</td> <td>285 492 000</td> </tr> <tr> <td>դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրամեդիա, ջուր, հեռախոսավաղձ, հնտերներ, աղբահանություն, գազ).</td> <td>35 328 000</td> </tr> <tr> <td>ե) տրանսպորտային ծախսեր</td> <td>12 362 400</td> </tr> <tr> <td>է) 25նքերի պահպանության ծախսեր</td> <td>3 794 400</td> </tr> <tr> <td>զ) գրանցման կային ծախսեր</td> <td>5 059 200</td> </tr> <tr> <td>ը) աշխատակիցների բժշկական ավաիտվագրության, շենքերի ու ավտոմեքենաների ավաիտվագրության, արժիմատրատիվ և ատրիտորական ծախսեր</td> <td>2 325 600</td> </tr> <tr> <td>թ) գործուղման ծախսեր</td> <td>21 236 400</td> </tr> <tr> <td>ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության ծախսեր</td> <td>2 244 000</td> </tr> <tr> <td>ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառնությունների և չնախատեսված ծախսեր</td> <td>4 610 400</td> </tr> <tr> <td></td> <td>4 182 000</td> </tr> <tr> <td></td> <td>469 780 800</td> </tr> </table> Ընդամենը	ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական կարագամեր, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ուսանյակներ.	Դրամ	բ) բուժամենակազմի աշխատավարձեր, հարկեր.	93 146 400	գ) վարչական աշխատակիցների աշխատակազմեր, հարկեր.	285 492 000	դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրամեդիա, ջուր, հեռախոսավաղձ, հնտերներ, աղբահանություն, գազ).	35 328 000	ե) տրանսպորտային ծախսեր	12 362 400	է) 25նքերի պահպանության ծախսեր	3 794 400	զ) գրանցման կային ծախսեր	5 059 200	ը) աշխատակիցների բժշկական ավաիտվագրության, շենքերի ու ավտոմեքենաների ավաիտվագրության, արժիմատրատիվ և ատրիտորական ծախսեր	2 325 600	թ) գործուղման ծախսեր	21 236 400	ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության ծախսեր	2 244 000	ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառնությունների և չնախատեսված ծախսեր	4 610 400		4 182 000		469 780 800
ա) բուժ.սարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական կարագամեր, դեղորայք, ակնոցներ, օպտիկական ուսանյակներ.	Դրամ																											
բ) բուժամենակազմի աշխատավարձեր, հարկեր.	93 146 400																											
գ) վարչական աշխատակիցների աշխատակազմեր, հարկեր.	285 492 000																											
դ) կոմունալ ծախսեր (6 կլինիկաների էլեկտրամեդիա, ջուր, հեռախոսավաղձ, հնտերներ, աղբահանություն, գազ).	35 328 000																											
ե) տրանսպորտային ծախսեր	12 362 400																											
է) 25նքերի պահպանության ծախսեր	3 794 400																											
զ) գրանցման կային ծախսեր	5 059 200																											
ը) աշխատակիցների բժշկական ավաիտվագրության, շենքերի ու ավտոմեքենաների ավաիտվագրության, արժիմատրատիվ և ատրիտորական ծախսեր	2 325 600																											
թ) գործուղման ծախսեր	21 236 400																											
ժ) ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության ծախսեր	2 244 000																											
ժա) գույքահարկ, հողի հարկ, բանկային գործառնությունների և չնախատեսված ծախսեր	4 610 400																											
	4 182 000																											
	469 780 800																											

3/12

7	Քարեզործություն ստացողը Լուու մարզի Վանաձոր և ԼՂՂ Ստեփանակերտ քաղաքներում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր դարձմանտներ ատամնաբուժական և ակնբուժական օգնություն ստանալու նպատակով: Ապաստարկում են նաև նույն մարզերի սահմաններում տվյալ քաղաքների տարածքից դուրս բնակվող հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների մինչև 14 տարեկան երեխաները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2014թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամրագրված Ֆինանսական միջոցների ծավալը Ծրագրի շրջանակներում 2014թ. նախատեսվում է լիարժեքորեն ապահովել 33 -ում գործող ատամնաբուժական կլինիկաներում հաշվառված 85,394 և ԼՂՂ-ում հաշվառված 6,743 երեխաների ընթացիկ ատամնաբուժական օգնության և կամխարզելիչ միջոցառումների անվճար իրականացումը: Տարվա ընթացքում 33-ում նոր հաշվառվող 11,400-11,800 և ԼՂՂ-ում նոր հաշվառվող 800-900 երեխաների լրիվ ատամնաբուժական սամացիայի և կամխարզելիչ միջոցառումների անվճար իրականացումը: 33-ում ակնբուժական 5 կաբինետներում նախատեսվում է հաշվառված 6,207 և ԼՂՂ-ում հաշվառված 756 դիսպաններ հիվանդների ընթացիկ ակնբուժական օգնության և կամխարզելիչ միջոցառումների իրականացում, 33-ում նոր հաշվառվող 1,600-1,700 և ԼՂՂ-ում նոր հաշվառվող 150-160 երեխաների ակնբուժական մամխարզելիս հետազոտությունների և բուժման կազմակերպում, ակնոցի ամրագրություն ունեցող 33-ից 1,380-1,420 և ԼՂՂ-ից 135-150 երեխաների անվճար ակնոցներով ապահովում, օպտիկական ուսմանակների ամրագրություն ունեցող 10 - 15 երեխաների անվճար ուսմանակներով ապահովում և մշտական դեղորայքային բուժման ամրագրություն ունեցող 33-ից 880-1,100 և ԼՂՂ-ից 120-140 երեխաների անվճար դեղորայքով և համապատասխան բուժական պրոցեդուրաներով ապահովում: Ընդհանուր առմամբ 2014թ. նախատեսվում է 33-ում 108,000-110,000 և ԼՂՂ-ում 8,000-9,000 ատամնաբուժական, և 33-ում 21,000- 22,000 և ԼՂՂ-ում 2,200-3,000 ակնբուժական համախառնների լիարժեք ապահովում: Նշված միջոցառումների իրականացման համար 33-ում նախատեսված ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 432,652,800 33 դրամ, իսկ ԼՂՂ-ում 37,128,000 33 դրամ:

3/13

10	2014թ. բուժամրաքակրումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար պայմանագրեր ենք կնքելու ԱՄՆ «Շայն» ընկերության, Երևանում «Էլրեքս» ՓԲԸ, «Եսգեթ Ֆարմա» ՍՊԸ, 32 «Լաուկա» ՍՊԸ, «Սայր Օպտիկ» ՍՊԸ հետ: ԱՄՆ-ից պիտի գնվեն 16,116,000 դրամի բժշկական պարագաներ և դեղորայք, որոնք Երևան են տեղափոխվելու Միացյալ Չայկական Ֆոնդի միջոցով, իսկ Երևանում պիտի գնվեն 77,030,400 դրամի բժշկական պարագաներ, սարքեր, կահույք, դեղորայք, ակնոցներ, ուսմանակներ: «Եսգեթ Ֆարմա» ընկերության հետ 24.01.2014թ. կնքված ատամնաբուժական դեղամիջոցների մատակարարման N02/2014 պայմանագիր 5,699,000 դրամ ընդհանուր արժեքով, առանց ԱԱԲ-ի: 20%- ԱԱԲ-ը կազմում է 1,139,800 դրամ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը 81,425,200 դրամ (որից 35,328,000 դրամը վաղախան աշխատակիցների աշխատակարծեր և 46,097,200 դրամը՝ տնտեսական), որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի (469,780,800) 17,33%:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ Ծրագիրը համաձայնեցված է 33 և ԼՂՂ առողջապահության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզպետարանների առողջապահության վարչությունների, 33 հարկային ծախսություն, 33 կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող համեմատողական եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ամենամյա աուդիտ, բուժվող երեխաների ծնողներ:

3/13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

3/13

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

18.02.14թ N 3/38-2/2272-14

Ձեր N° _____

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ» պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.02.14թ. N 15/15.4/1846-14 գրության՝ կապված «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարապետյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014 թվականին իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանցուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227

N 034/4288-14
18.02.14թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

3/13

0078 Երևան, Հայրապետյան 41", հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

N 02/996-14
19.02.14թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն «Կառավարության 2014թ. փետրվարի 12-ի 15/15.4/1846-14 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Հովարդ Կարապետյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2014 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները, մասնավորապես՝ ծրագրի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել ծրագրի իրականացման տևողությունը՝ նշելով ծրագրի ավարտի տարեթիվը:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

N 035/4467-4
19.02.14թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

3/13

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

13.02.14 N 277/22/1250-14

Ձեր N _____

« ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2014թ. փետրվարի 12-ի թիվ 15/15.4/1846-14 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարազյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014 թվականին իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ «Հատուցապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 3/12

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N 048/3-4/1663-14
13.02.14թ.

« Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.02.2014թ. թիվ 15/15.4/1846-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարազյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014 թվականին իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645


Կատարող՝ Նաիրա Փափախյան
«ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային թաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն»
հեռախոս 52 27 21

N 020/3949-14
13.02.14թ

N 044/3922-14
13.02.14թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ 3/13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ 3/13

3301ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

« 17 » 02 2014թ. № 01/769-14
Ձեր 2014-02-12 № 15/15.4/1846-14

« 17 » 02 2014թ. Ձ. Գյումրի, Գ. Նժդեհի 16
N: 01/705-14 հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

« ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

« Հառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ Ս. Տեր-Սիմոնյանին

Ձեր՝ 12. 02. 2014թ.
թիվ՝ 15/15.4/1846-14

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

« Հիրակի մարզպետարանում քննարկվել է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարագյոյան» բժշկական
բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014 թվականին
իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական
ծրագրի մասին» որոշման նախագիծը:

« Սյունիքի մարզպետարանում քննարկվել է «Հովարդ Կարագյոյան»
բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014
թվականին իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն»
բարեգործական ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը:

Առաջարկվում է ծրագիրը որակելու որպես բարեգործական:

Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի
նշանակությունը և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝

Ֆ. ՅՈՒՆԱԿՅԱՆ

ՀԱՐԶԱԿԱՆ
/0312/4-90-00

№ 116/4182-14
17.02.14թ

Կատարող՝ Ա. Ծառոյան
Հեռ. 0285-2-35-10

Վ. ՀԱՎՈՐՅԱՆ

№ 117/4162-14
17.02.14թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

3/13

☒ ք. Կանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ 101/104.3.2/673-14

« 17 » 02 2014 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՇՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 12.02.2014 թ. թիվ 15/15.4/1846-14 գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Կարևորում եմ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 469,780,800 դրամ ընդհանուր արժեքով «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիրը և չեմ առարկում այն որակել որպես բարեգործական:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Հիմնավորում	Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը
Հիմնավորում	ՀՀ արդարատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ
<p>- ծրագրի անվան մեջ նշված է կազմակերպության կողմից 2014 թվականի ընթացքում իրականացվող ծրագրի մասին, իսկ 8-րդ կետում ծրագրի իրականացման տևողությունը նախատեսված է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամկետը:</p>	<p>Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են, որ ծրագրի անիղաժեշտ է հստակեցնել՝ նշելով ծրագրի ավարտի տարեթիվը:</p>

3/13

101/4146-14
17-02-14g

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2014 թվականի N Մ - Ա
քաղ. Երևան

3/14

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱՎՅՈՋՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅ-
ՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒՄՄԱՆ (ԱՆՎՃԱՐ
ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 1/3.8-2/2269-14, Հայաստանի Հանրա-
պետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 19-ի N 02/
995-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվա-
կանի փետրվարի 13-ի N ԴԴ/22/1251-14, Հայաստանի Հանրապետության կառավարության
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-
4/1662-14, եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Բարեգործական որակելի «Հովարդ Կարագոյան» բժշկական բարեգործական հա-
սարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգին, 180, ՀՎՀՀ՝ 01533153)
կողմից իրականացվող՝ 35,186,130 դրամ ընդհանուր արժեքով «Պարբերական հիվանդու-
թյամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործա-
կան ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատա-
կով «Հովարդ Կարագոյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպու-
թյան կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մոդուս Իմէքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00874298) 2014 թվականի հունվարի 29-ին
կնքված՝ N 05/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կոլխիցին»
1մգ դեղորայքի մատակարարում՝ 35,186,130 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի
հարկի:

3. «Հովարդ Կարագոյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակեր-
պությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաս-
տանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապե-
տության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առըն-
թեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապե-
տության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի,
Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագոյան» ԲԲԴԿ

.....Ավտոգր ֆարմությունյանցի կողմից

«.....» 4/4/2014թ. 2014թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱՎՅՈՋՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒՄՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Պարբերական հիվանդության հիվանդությանը տառապող երեխաների մշտական դեղորայքով ապահովումը երկվանդերի վաղախա ամիլոիդոզ-երիկամային անբավարարությունը և հաշմանդամությունը կամխելու համար:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել արտոնություններից
3	Բարեգործը	Հովարդ Կարագոյան Գիշատակի Ընկերություն (ԱՄՆ – Նյու-Յորք)
4	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարագոյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորքի Այգին-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ԴՎԴԴ-01533153, «Արաբիկր» բժշկական համալիր, ԳԳ առողջապահության նախարարության Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոն:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվելու է ԳԳ բոլոր մարզերում, Երևան քաղաքում, ԼՂԴ-ում, հիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբիկր» բժշկական համալիրի Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի մասնաճյուղերի կողմից:
6	Ծրագրի օրուցն	Ծրագրի բնագավառը - առողջապահական: Ծրագիրը ֆինանսավորվում է ամերիկյան «Հովարդ Կարագոյան» հիշատակի ընկերության կողմից, որի ընդհանուր արժեքն է 35,186,130 ԳԳ դրամ: դեղորայք - «Կոլխիցին»՝ 1 մգ - 630,000 հար (31,500 տուփ, 1տուփը 20 հար) 35,186,130 ԳԳ դրամ ընդհանուր արժուրությամբ:

3/14

7	Քարեգործություն ստացող	Շահառուներն են երևան քաղաքի, ՀՀ բոլոր մարզերի և ԼՂՀ-ի պարբերական հիվանդություններ հիվանդ կենտրոնում հաշվառված և 2014թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները:
8	Ծրագրի հրավանագման տևողությունը	Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2014թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար:
